

ՀԱՐԿԵՐ-ՀՆԱ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵՋ

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
matevosyan.ashot@asue.am

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
ani.grigoryan@asue.am

ՄԱՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
matevosyan.mane@asue.am

ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
hovik.grigoryan@asue.am

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-246

Համառոտագիր

Ֆիսկալ կայունության գնահատման ժամանակ պետական պարտքի ցուցանիշները սովորաբար արտահայտվում են որպես համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ հարաբերակցություն, սակայն պետական պարտքի բացարձակ ծավալը միակ ցուցիչը չէ, որը կարող է հստակ պատկեր տալ երկրի վճարունակության և ֆինանսական կայունության մասին:

Այս համատեքստում առաջ է քաշվում կարևոր հարցադրում՝ արդյո՞ք Հարկեր-ՀՆԱ (Tax-to-GDP) հարաբերակցությունը կարող է հանդես գալ որպես պետական պարտքի կայունության գնահատման համարժեք և տեղեկատվական ցուցիչ:

Հոդվածում Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը դիտարկվում է որպես պետական պարտքի սպասարկման կարողության և ֆինանսական ձկունության գնահատման գործիք:

Հարկաբյուջետային կարողությունների ձգձգիտ գնահատումը վճռորոշ նշանակություն ունի մակրոտնտեսական կայունության ապահովման գործում: Հետազոտության ընթացքում վերլուծվել է այս ցուցանիշի կիրառելիությունն ու արդյունավետությունը՝ պետական ֆինանսների կայուն կառավարման համատեքստում:

Այս համատեքստում Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը ընդգծվել է կարևոր գործիք, որը հնարավորություն է տալիս գնահատելու պետության ունակությունը՝ հավաքելու բավարար ռեսուրսներ պարտքի սպասարկման նպատակով:

Պետական պարտքի կայունության գնահատման համար Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կարևոր ցուցանիշ է, որը ցույց է տալիս պետության կարողությունը՝ մոբիլիզացնելու հարկային եկամուտներ՝ պարտքի սպասարկման համար:

Հոգվածում իրականացվել է համեմատական վերլուծություն Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Իրանի վերաբերյալ՝ նպատակ ունենալով պարզելու, թե ինչպես են հարկաբյուջետային եկամուտների մակարդակները ազդում պարտքի սպասարկման արդյունավետության վրա:

Հետազոտության արդյունքներով՝

- Վրաստանում հարկային մուտքերի բարձր մակարդակը նպաստում է պետական պարտքի կայուն սպասարկմանը:
- Հայաստանում հարկային եկամուտների համեմատաբար ցածր մակարդակը սահմանափակում է պարտքի կառավարման արդյունավետությունը:
- Ադրբեջանում և Իրանում, չնայած էներգառեսուրսների առկայությանը, հարկաբյուջետային եկամուտների ցածր մակարդակը խոչընդոտում է ֆինանսական ձկունությունը, հատկապես՝ արտաքին տնտեսական ձնշումների պայմաններում:

Այսպիսով՝ Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կարող է դիտարկվել որպես կարևոր չափանիշ՝ պետական պարտքի կայունության և կառավարման հնարավորությունների գնահատման համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ պետական պարտք, պարտքի կայունություն, հարկաբյուջետային կարողություն, Հարկեր-ՀՆԱ հարաբերակցություն, ֆինանսական ձկունություն:

THE ROLE OF THE TAX-TO-GDP RATIO IN PUBLIC DEBT ASSESSMENT

ASHOT MATEVOSYAN

Armenian State University of Economics
Department of Finances, Lecturer,
Doctor of Economics, Professor
matevosyan.ashot@asue.am

ANI GRIGORYAN

Armenian State University of Economics
Department of Finances, Lecturer,
PhD in Economics
ani.grigoryan@asue.am

MANE MATEVOSYAN

Armenian State University of Economics
Department of Finances, Lecturer,
PhD in Economics
matevosyan.mane@asue.am

HOVIK GRIGORYAN

Armenian State University of Economics
Department of Finances, Lecturer,
PhD in Economics
hovik.grigoryan@asue.am

Abstract

When assessing fiscal stability, public debt indicators are typically expressed as a ratio to the country's Gross Domestic Product (GDP). However, the absolute volume of public debt is not the only indicator that can provide a clear picture of a country's solvency and financial stability.

In this context, an important question arises: can the Tax-to-GDP ratio serve as an adequate and informative indicator for assessing public debt sustainability?

In this article, the Tax-to-GDP ratio is considered as a tool for evaluating a country's capacity to service its debt and its financial flexibility.

Accurately assessing fiscal capacity is crucial for ensuring macroeconomic stability. The study analyses the applicability and effectiveness of this indicator in the context of sound public financial management.

Within this framework, the Tax-to-GDP ratio is highlighted as an essential tool that allows evaluating a country's ability to mobilise sufficient resources to service its debt.

For assessing public debt sustainability, the Tax-to-GDP ratio is an important indicator that reflects the state's capacity to mobilise tax revenues for debt servicing.

The article presents a comparative analysis of Armenia, Georgia, Azerbaijan, and Iran to determine how the level of tax and budgetary revenues affects the

efficiency of debt servicing.

According to the study's findings:

- In Georgia, a high level of tax revenues contributes to the stable servicing of public debt.
- In Armenia, the relatively low level of tax revenues limits the effectiveness of debt management.
- In Azerbaijan and Iran, despite the presence of energy resources, the low level of fiscal revenues hinders financial flexibility, especially under external economic pressures.

Thus, the tax-to-GDP ratio can be considered a crucial criterion for evaluating the sustainability and management capacity of public debt.

Keywords and phrases: Public debt, debt sustainability, fiscal capacity, Tax-to-GDP ratio, financial flexibility.

РОЛЬ СООТНОШЕНИЯ НАЛОГОВ К ВВП В ОЦЕНКЕ ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА

АШОТ МАТЕВОСЯН

Преподаватель кафедры финансов
Армянского государственного экономического университета,
доктор экономических наук, профессор
matevosyan.ashot@asue.am

АНИ ГРИГОРЯН

Преподаватель кафедры финансов
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук
ani.grigoryan@asue.am

МАНЕ МАТЕВОСЯН

Преподаватель кафедры финансов
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук
matevosyan.mane@asue.am

ОВИК ГРИГОРЯН

Преподаватель кафедры финансов
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук
hovik.grigoryan@asue.am

Аннотация

При оценке фискальной устойчивости показатели государственного долга, как правило, выражаются в соотношении к валовому внутреннему продукту (ВВП). Однако абсолютный объём государственного долга — не единственный

показатель, который может дать чёткое представление о платёжеспособности и финансовой устойчивости страны.

В этом контексте возникает важный вопрос: может ли соотношение налогов к ВВП (Tax-to-GDP) выступать в качестве адекватного и информативного показателя для оценки устойчивости государственного долга?

В статье соотношение налогов к ВВП рассматривается как инструмент оценки способности государства обслуживать долг и финансовой гибкости.

Точная оценка фискальных возможностей имеет решающее значение для обеспечения макроэкономической стабильности. В ходе исследования проанализирована применимость и эффективность данного показателя в контексте устойчивого управления государственными финансами.

В этом контексте соотношение налогов к ВВП выделяется как важный инструмент, позволяющий оценить способность государства мобилизовать достаточные ресурсы для обслуживания долга.

Для оценки устойчивости государственного долга соотношение налогов к ВВП является важным показателем, отражающим способность государства мобилизовать налоговые доходы для обслуживания долговых обязательств.

В статье проведён сравнительный анализ Армении, Грузии, Азербайджана и Ирана с целью выявления того, как уровень налогово-бюджетных поступлений влияет на эффективность обслуживания долга.

По результатам исследования:

- в Грузии высокий уровень налоговых поступлений способствует стабильному обслуживанию государственного долга;
- в Армении относительно низкий уровень налоговых доходов ограничивает эффективность управления долгом;
- в Азербайджане и Иране, несмотря на наличие энергетических ресурсов, низкий уровень фискальных доходов препятствует финансовой гибкости, особенно в условиях внешнеэкономического давления.

Таким образом, соотношение налогов к ВВП может рассматриваться как важный критерий для оценки устойчивости и возможностей управления государственным долгом.

Ключевые слова: государственный долг, устойчивость долга, фискальные возможности, соотношение налогов к ВВП, финансовая гибкость.

Ներածություն

Արդի գլոբալացման պայմաններում երկրներն աչքի են ընկնում պարտքի մեծ ծավալներով: Առաջատար պարտքային միջոցների շոշափելի կուտակումներ են արձանագրվում հատկապես ճգնաժամային իրավիճակներում, երբ տնտեսություններն աշխուժացնելու նպատակով երկրները մեծ միջոցներ են ուղղում իրական հատված՝ շատ հաճախ պարտք ներգրավելու հաշվին:

Պարտքային հիմնախնդիրը 2008 թ. ճգնաժամից սկսած համաշխարհային մարտահրավեր է դարձել՝ պետությունների համար առաջացնելով բազմաթիվ տնտեսական և քաղաքական ռիսկեր ու մարտահրավերներ: Այս ռիսկերի չեզոքացման կամ թուլացման անհրաժեշտությունը առաջին պլան է մղում

պարտքի օգտագործման և կառավարման արդյունավետության բարձրացման հիմնահարցերը: Դրանք առավել քան արդիական են մեր հանրապետության համար:

ՀՀ-ն, լինելով փոքր-բաց տնտեսություն, անմիջականորեն է ընդունում համաշխարհային ֆինանսական շուկայից եկող ազդակները և տարածաշրջանային իրադարձությունների ազդեցությունները: 2008 թ. ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ-ի համար թեև ոչ այնքան էական էր, քանի որ ՀՀ-ում այդքան զարգացած չէր կապիտալի շուկան, իսկ 2008 թվականի ֆինանսական ճգնաժամը գաղտնիք չէ, որ սկզբից էր առել ԱՄՆ հիպոթեկային շուկայից, այդուհանդերձ այն բացահայտեց ՀՀ տնտեսության թույլ և խոցելի կողմերը, իսկ հակաճգնաժամային քաղաքականության գործիքների շարքում առաջնայինը պետական պարտքն էր: Եվ հենց հակաճգնաժամային միջոցառումների հետևանքով պետական պարտքի բեռը ավելի քան կրկնապատկվեց և շարունակում է աճել մինչ օրս:

Ներկայումս այն հասել է այնպիսի մակարդակի, որն արդեն իսկ սահմանափակում է հարկաբյուջետային քաղաքականության հնարավորությունները, իսկ համաշխարհային, տարածաշրջանային տնտեսական անկայուն և ռիսկերով լի հեռանկարների պայմաններում այսպիսի միտումների պահպանումը մեծ ռիսկեր է ստեղծում ՀՀ կառավարության համար:

Գրականության ակնարկ և տեսամեթոդաբանական հիմքեր

Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի՝ պետական պարտքի վերլուծության ժամանակ առավել հաճախ օգտագործվում է պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը, սակայն Հարկեր-ՀՆԱ ցուցանիշը կարող է առավել ճշգրիտ պատկեր ստեղծել պարտքի սպասարկման հնարավորությունների վերաբերյալ [1]:

OECD զեկույցների համաձայն՝ այն երկրներում, որտեղ հարկային համակարգը արդյունավետ է և պետական կառույցները կայացած են, բարձր Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը ցույց է տալիս պետության կարողությունը մոբիլիզացնելու ֆինանսական ռեսուրսներ, ինչը կարևոր է երկարաժամկետ պարտքի սպասարկման համար [2]:

Ռայնհարթը, Ռոզոֆը և Սավաստանոն [3] ուսումնասիրել են կապիտալի հոսքերի ցիկլերը դեպի զարգացող երկրներ վերջին երկու հարյուր տարիների ընթացքում և եկել այն եզրակացության, որ պարտապանները և պարտատերերը փոխվում են, սակայն ցիկլերի բնույթը ժամանակի ընթացքում մնացել է նույնը: Երբ տոկոսադրույքները և բաժնետոմսերի շահութաբերությունը ցածր են, իսկ իրացվելիությունը բարձր է, ներդրողները բարձր շահութաբերություն են փնտրում այլուր: Նման ժամանակներում զարգացող երկրների կառավարությունների համար հեշտ է միջոցներ հայթայթել արտաքին աղբյուրներից, ինչը նրանք անում են, սակայն պատմությունը ցույց է տվել, որ շատ երկրների համար պարտքերի ավելացումը հանգեցնում է անվճարունակության: Բազմաթիվ դեֆոլտների պատմությունները ցույց են տալիս, որ կապիտալի մեծ հոսքերը նման երկրներ ավարտվում են վճարունակությամբ: Ըստ այդ հեղինակների՝ պետական պարտքի ընդունելի վերին սահմանը հատուկ է

յուրաքանչյուր երկրի համար և կախված է նախորդ դեֆոլտի պատմությունից և գնաձի պատմությունից:

Հայ հետազոտող Ա. Գրիգորյանն իր «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման տեսամեթոդական հիմքերը» հետազոտության մեջ անդրադարձել է պարտքային «թակարդների» շատ օրինակների՝ առանձնացնելով Հունաստանի պարտքային ձգնաժամը, Պորտուգալիայի, Իռլանդիայի, Իտալիայի պարտքային ձգնաժամերը [4, էջ 127]:

Ֆինանսական և տնտեսական վերջին ձգնաժամի ընթացքում շատ այլ երկրներում լայնորեն քննարկված պարտքային խնդիրները դեռ թարմ են փորձագետների և հարցով հետաքրքրվողների մտքերում: Ասվածը վկայում է, որ պետական պարտքի չափի և կառավարելիության հարցը ոչ միայն այժմ արդիական է, այլև ոչ մի դեպքում չի կարող անտեսվել:

Այս առումով առավել ցայտուն է Հունաստանի պարտքային ձգնաժամով պայմանավորված տնտեսական փլուզումը, որը տևեց շատ ավելի երկար, քան 1930-ականների ԱՄՆ-ի Մեծ դեպրեսիան: ՀՆԱ-ի նկատմամբ պետական պարտքը 100%-ից հասել է 180%-ի, որի մեծ մասը կազմել է արտաքին պարտքը: 2018 թվականի հունիսի 21-ին հունական վարկատուները պայմանավորվել են 10 տարով երկարացնել շուրջ 97 միլիարդ եվրոյի վարկերի մարման ժամկետը: Հունաստանը պարտքային ձգնաժամից դուրս եկավ 2018 թվականի օգոստոսի 20-ին:

Այս երկրների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ կառավարության պարտքի բեռի ավելացմանը զուգահեռ, կարմիր թելի պես ընթանում է դրա ոչ ձիշտ տեղաբաշխման խնդիրը պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում [5]:

Վլադիմեր Պապավայի և Վախթանգ Չարայայի [6, էջ 10] հետազոտության համաձայն՝ COVID-19 համաճարակը առաջացրել է համաշխարհային տնտեսական ձգնաժամ, որը նաև կոչվում է կորոնավիրուսային ձգնաժամ: Համաշխարհային տնտեսությունը զգալի անկում է ապրել համաշխարհային համավարակի ձգնաժամի պատճառով: Երկրների տնտեսություններին աջակցելու նպատակով ամբողջ աշխարհում մոբիլիզացվել են բավարար քանակությամբ ֆինանսական միջոցներ: Արտաքին պարտքի զգալի աճը, հավանաբար, առաջիկա տարիներին զարգացող պետություններին հարկաբյուջետային մեծ ճնշման տակ կդնի: Հետևաբար, G20-ի համար հրատապ է դառնում այդ պարտքերի վերակառուցման նոր գլոբալ համակարգ ստեղծելը: Որոշ երկրների պետական պարտքը գերազանցում էր ոչ միայն ՀՆԱ-ի լայնորեն ձանաչված 60%-ը, այլև հենց ՀՆԱ-ն նույնիսկ մինչև կորոնավիրուսի սկսվելը:

Պրոֆեսորներ Ա. Մաթևոսյանի, Լ. Գրիգորյանի, Հ. Մնացականյանի և հետազոտողներ Ա. Գրիգորյանի, Գ. Կիրակոսյանի, Գ. Սիրոյանի համատեղ հետազոտության [7] ընթացքում անդրադարձ է կատարվել պարտքի գնահատման ինչպես արդեն կիրառելի պարտք/ՀՆԱ հարաբերակցության գնահատման մետեցմանը, այնպես էլ առաջարկող մեթոդաբանության կիրառմանը՝ առանձնացնելով հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Այդ համատեքստում կատարված հետազոտության արդյունքներում հետազոտողները ընդգծել են պարտքի կառավարման առանձին գործակալության գործարկման առաջարկը՝ որպես ինստիտուցիոնալ նոր կառույցի գործարկում:

Պարտքի կառավարման առանձին գործակալության միջազգային փորձն ընդգծելով՝ պարտքի կառավարման գործակալություններ կան Բելգիայում, Հունաստանում, Նիդեռլանդներում և Սլովակիայում **[8, էջ 128]**:

Մի շարք երկրներում գործակալության գործառույթները վերապահված են պետականգանձապետական հաստատություններին, օրինակ՝ Պորտուգալիայում: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ուսումնասիրված երկրների մեծ մասում պարտքի կառավարումը համատեղ իրականացվում է ֆինանսների նախարարությունների և պարտքի կառավարման գործակալությունների/ինստիտուտների կողմից **[9]**: Վերլուծության արդյունքները հաշվի առնելով և առաջարկը տեղայնացնելու նպատակով իրականացրել են swot վերլուծություն մեր և հարևան Վրաստանի Հանրապետության համար:

Մեթոդաբանություն

Պարտքի սպասարկման կարողությունը երկրի վստահելիության հիմնական ցուցանիշն է: Հետազոտության ընթացքում վերլուծության համար մեթոդական հիմք է հանդիսացել մեր և հարևան հանրապետությունների հարկեր/ՀՆԱ ցուցանիշների հարաբերակցության գնահատումը՝ որպես պարտքի կառավարման արդյունավետության և պարտքի սպասարկման ունակության ցուցիչ:

Առաջարկվող գնահատման մեթոդաբանությունը տեղայնացրել ենք մեր և հարևան պետությունների դիտարկվող ցուցանիշների համեմատական վերլուծության նպատակով:

Այս հոդվածում դիտարկվել են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Իրանի տվյալները՝ համեմատական վերլուծության միջոցով:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական տեղեկագրերը և զեկույցները:

Վերլուծություն և ստացված արդյունքներ

Հետազոտության ընթացքում համեմատական մեթոդով իրականացրել ենք Հարկեր-ՀՆԱ հարաբերակցության գնահատումը պետական պարտքի գնահատման համատեքստում: Այդ տեսակյունից կարևորել ենք.

1. Ֆիսկալ կարողությունների ցուցիչը: Հարկային մուտքերը կազմում են պետական բյուջեի հիմնական մասը: Այս առումով Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կարող է բնութագրել պետության ֆինանսական «արագ արձագանքման» պոտենցիալը:

Ըստ Համաշխարհային բանկի՝ այն երկրները, որտեղ այդ հարաբերակցությունը բարձր է, ինչպես Նորվեգիան (42.2%) կամ Ֆրանսիան (45.4%), սովորաբար ունեն նաև կայուն պետական պարտք՝ չնայած անվանական մեծ ծավալին **[10]**:

2. Համեմատական վերլուծության հնարավորությունը: Ստորև ներկայացված թիվ 1 աղյուսակում ներկայացրել ենք մեր և հարևան պետությունների Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունն ու պետական պարտքի ՀՆԱ-ի նկատմամբ

հարաբերակցությունը **[11]** 2023 թվականի պաշտոնական ամփոփ տվյալներով:
Հայաստան: 2023 թվականին ՀՀ Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 23.5%, իսկ պետական պարտքը՝ 52.9%: Սա ցույց է տալիս, որ հարկային մուտքերը բավարար չեն պարտքի արդյունավետ սպասարկման համար:

Վրաստան: 2023 թվականին Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը՝ 25.0%, պետական պարտքը՝ 41.0%: Հարկային մուտքերի բարձր մակարդակը նպաստում է պարտքի կայուն սպասարկմանը:

Իրան: 2023 թվականին Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը՝ 7.0%, պետական պարտքը՝ 31.9%: Ցածր հարկային մուտքերը և միջազգային պատ-
 ժամիջոցները սահմանափակում են երկրի ֆինանսական կարողությունները:

Ադրբեջան: 2023 թվականին Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը՝ 13.0%, պետական պարտքը՝ 22.1%: Չնայած հարկային մուտքերի ցածր մակարդակին՝ պետական պարտքը համեմատաբար ցածր է:

Աղյուսակ 1.

Հարկեր-ՀՆԱ հարաբերակցություն (2023 թ.)⁴

Երկրներ	Պարտք/ՀՆԱ	Հարկեր/ՀՆԱ
Հայաստան	52.9	23.5
Վրաստան	41.0	25.0
Իրան	31.9	7.0
Ադրբեջան	22.1	13.0

Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից:

Այսպիսով՝ դինամիկ ռիսկերի գնահատման տեսանկյունից այն երկրներում, որտեղ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ցածր է, սակայն պարտքը բարձր է, ինչպես Արգենտինան կամ Լիբանանը, հաճախ հայտնվում են վճարունակության ճգնաժամի եզրին: Այս ցուցանիշի կիրառումը կարող է նախազգուշացնող գործիք լինել:

Պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ երկրներն, ունենալով պարտքի բարձր մակարդակ, խնդիրներ չեն ունենում և կարողանում են հաջողությամբ զարգանալ՝ արձանագրելով տնտեսական աճի բարձր տեմպեր:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկրների պարտքային քաղաքականության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ պարտքի մակարդակը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս երկրի պարտքային իրավիճակի մասին: Այս տեսանկյունից կարևորում ենք երկրի կողմից ներգրավված պարտքի արդյունավետ օգտագործումը և կառավարումը **[12, էջ 658]:**

4 Տվյալները՝ Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի:

Եզրակացություն

Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կարող է ծառայել որպես լրացուցիչ չափանիշ՝ պետական պարտքի կայունության գնահատման գործում: Այն թույլ է տալիս ոչ միայն գնահատել պարտքի ներկայիս բեռը, այլև՝ պետության կարողությունը երկարաժամկետում սպասարկելու այդ պարտքը: Սակայն այն պետք է կիրառել համատեքստային վերլուծության շրջանակում՝ հաշվի առնելով տնտեսության կառուցվածքը, ստվերային մասի չափը, պետական ծախսերի արդյունավետությունը և քաղաքական կայունությունը:

Հետազոտության ընթացքում Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը համարվել է որպես պետական պարտքի գնահատման գործիք: Այս առումով մակրոտնտեսական կայունության և ֆիսկալ ձկունության առումով հարկաբյուջետային կարողությունների ձիշտ գնահատումը կարևոր նշանակություն ունի:

Հոդվածում քննարկվել է և առաջարկվել է Հարկեր-ՀՆԱ հարաբերակցության գնահատման կիրառելիությունը՝ որպես պետական պարտքի սպասարկման կարողության ցուցիչ՝ հաշվի առնելով այդ մոտեցման առավելություններն ու սահմանափակումները, ինչպես նաև ներկայացվել են համեմատական տվյալներ մի շարք երկրների համար:

Այսպիսով՝ հարկային մուտքերի հաշվին պարտքի արդյունավետ սպասարկման համար խոչընդոտներ են հանդիսանում՝

- Ստվերային տնտեսության ազդեցությունը: Այն երկրներում, որտեղ ստվերային տնտեսության մակարդակը բարձր է (ինչպես օրինակ՝ Հնդկաստանը, Մեքսիկան), Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կարող է չարտացոլել տնտեսության իրական ներուժը:

- Չհավաքագրված ոչ հարկային եկամուտները: Որոշ երկրներում ոչ հարկային եկամուտներն ունեն զգալի դեր (օրինակ՝ նավթ արդյունահանող երկրներում):

- Կառավարման արդյունավետությունը: Նույն հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կարող է տարբեր արդյունքներ ունենալ՝ կախված պետական կառավարման և ծախսերի արդյունավետությունից:

Քննարկելով հարկային մուտքերի հաշվին պարտքի արդյունավետ սպասարկման համար խոչընդոտները՝ կատարվել են որոշ առաջարկներ:

Հարկեր-ՀՆԱ հարաբերակցության վրա հիմնված պարտքի գնահատման մեթոդի առավել արդյունավետ կիրառման համար առաջարկվել են հետևյալ քայլերը՝

- Ավելացնել հարկային մուտքերի դիվերսիֆիկացիան՝ ներգրավելով ոչ ավանդական եկամուտներ:
- Բարելավել հարկային վարչարարության համակարգը՝ նվազեցնելով ստվերային տնտեսության ազդեցությունը:
- Հիմնել պետական պարտքի կայունության գնահատումը նաև իրական հարկային կարողությունների վրա՝ ոչ միայն ՀՆԱ-ով պայմանավորված հարաբերակցություններով:
- Խրախուսել միջազգային համեմատական վերլուծությունների իրականացումը՝ տարածաշրջանային համատեքստով:

Օգտագործված գրականության ցանկ

1. IMF. Fiscal Monitor: Balancing Fiscal Policy Risks. 2012<https://www.imf.org>
2. OECD. Revenue Statistics 2021.<https://www.oecd.org>
3. Reinhart C. M., Rogoff K. S., & Savastano M. A. Debt Intolerance. Brookings Papers on Economic Activity, 1, 2003. Pp. 1-74. <https://doi.org/10.3386/w9908>
4. Grigoryan A. Theoretical-methodical fundamentals of the management of the foreign state debt of RA, Region and World, 2022. pp. 127-129, available at the following link: http://geopolitika.am/dir/wpcontent/blogs.dir/1/files/2022_3_127_133.pdf
5. Matevosyan A. & Grigoryan A. The philosophy of external public debt management. WISDOM, 24(4): 2022. pp. 91-101. WOS, <https://doi.org/10.24234/wisdom.v24i4.945> available at the following link: <https://wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/945>
6. Papava V., & Charaia V. The Problem of the Growth of Georgia's Public Debt during the Economic Crisis under the COVID-19 Pandemic. Expert Opinion, No. 152, Tbilisi, GFSIS, 2021, pp. 10-11, available at the following link: <https://gfsis.org.ge/files/library/opinion-papers/152-expert-opinion-eng.pdf>
7. Matevosyan A., Mnatsakanya H., Grigoryan L., Grigoryan A., Kirakosyan G. & Siroyan G. Economics Institutional Framework and Proposed Solutions Regarding Debt Policy: Evidence from Armenia and Georgia, BULLETIN OF THE GEORGIAN NATIONAL ACADEMY OF SCIENCES, vol. 19(193), no. 1, 2025, pp. 176-183, Scopus Q3 <http://science.org.ge/bnas/vol-19-1.html>
8. Matevosyan A., Grigoryan A., FEATURES OF LOCATION OF STATE DEBT MANAGEMENT AGENCY INSTITUTE IN RA. Region and World, 2024. pp. 128-131, <https://cyberleninka.ru/journal/n/region-i-mir?i=1128417>
9. GRIGORYAN A., Z. THE PHILOSOPHY OF EXTERNAL PUBLIC DEBT MANAGEMENT, Generis Publishing, Moldova, February 17, 2025, p. 149 ISBN-13: 979-8892488365, <https://www.bookfinder.com/search/?isbn=979-8-89248-836-5&submitBtn=Search&mode=isbn&st=sr&ac=qr>
10. World Bank. International Debt Statistics, 2023.<https://data.worldbank.org>
11. IMF Fiscal Monitor, 2023<https://www.imf.org/en/Publications/FM>
12. Մաթևոսյան Ա., Մաթևոսյան Մ., Գրիգորյան Ա. «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԲԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ», ՀԵՏԱԶՈՏԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ, ՄԱՅԻՍԻ 31, 2024 ISBN 978-9939-1-1866-6, 2024. էջեր 568-578, https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/Gitajoghov_2024.pdf